<<ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ >>ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Առարկա՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Սիմոնյան

Ուսումնական հաստատություն՝ <<Ուշիի Նիկոլ Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց>>

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1…. Ներածություն..... 3
2. Գրաճանաչության նախայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները..... 5
3. Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները..... 6
4. Նախաայբբենական շրջանի վերջում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները..... 12
5. Դասի պլան..... 13
6. Եզրակացություն.....16
7…. Օգտագործված գրականության ցանկ..... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վեց տարեկան երեխան դպրոց է գալիս: Այդ պահից երեխայի կյանքում սկսվում է նոր փուլ: Նախաայբբենական փուլից սկսած արդեն ուսուցիչը նպատակ է դնում իր առջև՝ երեխային սովորել սովորեցնելը:

Մայրենի լեզվի ուսուցման հիմնական նպատակներից մեկը աշակերտի մեջ խոսքի մշակույթի զարգացումն է, քանի որ առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել երեխայի կրթությունն ու դաստիարակությունը: Աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի միջին դպրոցի դասընթացի հիմնական նպատակներից մեկն է: «Կարդալու և գրելու ուսուցումը, ճիշտ է, երեխայի մեջ գործնական ունակությունների զարգացման որոշակի նպատակ ունի, սակայն վերջին հաշվով դրանց ուսուցումը ևս բացարձակապես ինքնանպատակ չէ, դրանք ևս միջոց են խոսքի զարգացման խնդիրների իրականացման համար»[1]:

Դպրոցում լեզուն, մի կողմից, ուսուցանվում է որպես հատուկ առարկա՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքը, մյուս կողմից, նպաստում է այլ առարկաների ուսուցմանը: Գործնական նշանակությունից լեզուն աստիճանաբար անցնում է ավելի բարդ գործառույթի և, առհասարակ, հանդես է գալիս որպես տրամաբանության զարգացման միջոց: «Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը»[2]:

Աշակերտի խոսքի ձևավորումը՝ որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, դեռևս նախաայբբենական շրջանից սկսած, թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ և արժեք է ստանում: Հարկ է նկատել, որ մանկավարժներից շատերը, գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները կարևորելով, շեշտը դնում են ուսուցչի աշխատանքի, նրա կիրառած սկզբունքների և դասի կազմակերպման ձևերի վրա: Այս դեպքում որոշ չափով անտեսվում են աշակերտների անհատական ու խմբային գործունեությունը, դասարանային և արտադասարանային աշխատանքները, որոնք ևս կարող են նպաստել աշակերտների հաղորդակցական, համագործակցային կարողությունների, մասնավորապես կապակցված խոսքի զարգացմանը:

Թեմայի արդիականությունը:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների ու իրականացման ուղիների քննությունը գրաճանաչության նախաայբբենականփուլում

---

[1] Ա. Տեր-Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա. Տարրական դասարաններ, Երևան, 1974, էջ 7:

[2] Կ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 742:

կարևոր նշանակություն ունի, քանի որ հնարավորություն է տալիս ժամանակակից մեթոդների դիտարկմամբ ուսումնասիրելու «Այբբենարանում» բառապաշարի համալրման, խոսքի զարգացման ուղղված առաջադրանքները, անցկացրած դասընթացների հիման վրա առաջարկելու խոսքի զարգացման արդյունավետ միջոցներ ու խաղեր: Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մեթոդների դիտարկմամբ փորձ է արվում բացահայտելու նախաայբբենական փուլի կազմակերպման առանձնահատկությունները առաջին դասարանում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները:

Առաջադրված խնդիրները:

Գրաճանաչության շրջանում մայրենի լեզվի ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ փորձել ենք ուսումնասիրել աշակերտի խոսքի զարգացման գործընթացը, նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները: Այդ նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

ա.ներկայացնել գրաճանաչության նախաայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները,

բ.ուսումնասիրել և վերլուծել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները,

գ. ուսումնասիրել և վերլուծել նախաայբբենական փուլի իրականացման եղանակները,

դ. դիտարկել խաղը՝ որպես նախաայբբենական փուլի խոսքի զարգացման միջոց, ե. վերլուծել խոսքի զարգացումը նախաայբբենական փուլում:

Հետազոտության օբյեկտն ու առարկան:

Մեր ուսումնասիրության առարկան նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիներն են, իսկ օբյեկտը՝ մայրենի լեզվի ուսուցման գործընթացը առաջին դասարանի նախաայբբենական փուլում:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Հետազոտության տեսական արժեքը «Այբբենարանի»փաստական նյութի ուսումնասիրության հիման վրա նախաայբբենական փուլի կարևորումն է:

Գրաճանաչության նախայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների, մասնավորապես ուշադրության, մտածողության և հիշողության առանձնահատկությունները. երեխաները երկար ժամանակ չեն կարող լսել, զբաղվել միևնույն գործողությամբ, արագ հոգնում են և այլն: Նախաայբբենական շրջանի դասի հիմնական մեթոդական շղթան (շղթայի քայլերնիրականացվում են 2 դասաժամի ընթացքում).

- կազմակերպական պահ.
- տնային աշխատանքի ստուգում.
- ֆիզկուլտ դադար.
- անցած ուսումնական նյութի կրկնություն, ամրակայում.
- հանձնարարված թեմայի կամ թեմատիկ նկարների շուրջ հարցազրույց.
- շարժուն խաղեր.
- հնչյունային վերլուծություն, նոր նյութի հաղորդում.
- դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր.
- նոր նյութի ամրակայում, մարզողական վարժություններ.
- մատները գրելուն նախապատրաստող վարժություններ.
- գրում.
- Ամփոփում[3].

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը: Այդ աշխատանքներում կարևորվում են.

- մատների մանր ֆալանգների ամրացումը,
- ձեռքի դաստակի մարզումը,
- տեսողական հիշողության զարգացումը,
- գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցումն ու դրանց պահպանման ունակության մշակումը,
- տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը,
- ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու,
- ձախից աջ գրության ապահովումը,
- հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակումը: Այս խնդիրների լուծումը պիտի սկսել նկարչությունից, ծեփից, ապլիկացիայից և մատների մանր ֆալանգների ամրացման, դաստակի մարզման վարժություններից:

---

[3]Գյուլամիրյան. Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2015, էջ 38-49

Սովորաբար երեխաները սիրում են նկարել և շատ են նկարում: Սակայն նպատակային նկարչությունն ունի իր խնդիրները

- անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել գունավորել նկարն՝ առանց տրված պատկերների սահմաններն անցնելու՝ առաջարկելով նախ՝ մեծ, ապա՝ փոքր պատկերներ,
- մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով, առանց տետրը շարժելու մեկ ուղղությամբ ներկելու ունակություն,
- սովորեցնել մատիտը ճիշտ բռնել,
- նկարչական տետրը դնել սեղանին թեքությամբ և պահպանել տետրից աչք ընկած տարածության սահմանը:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Այդ փուլում տարվող աշխատանքների հաջող կազմակերպան համար շատ կարևոր է դպրոց ընդունվող երեխայի նախապատրաստումը դպրոցական կյանքին ու կանոններին: Դպրոցը երեխայի համար նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով ու տպավորություններով: Ուսուցիչն իր աշխատանքն այնպես պիտի կազմակերպի, որ առաջին օրերին երեխաների համար այդ ամենի մեջ հաճելին ավելի շատ լինի, ոգևորությունն ավելի մեծ: Առաջին օրերի ուսուցողական խնդիրները լուծելու համար այդ ոգևորությունը մեզ շատ է պետք գալու: Երեխաները պետք է զգան աշխատանքի պատասխանատվությունը: Սա շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս առաջին օրերի ուսուցողական խնդիրների լուծման համար, այլև դաստիարակչական տեսակետից: Սովորելու աշխատանքի պատասխանատվությունը և դժվարությունը երեխաներն անպայման պետք է զգան, սակայն դրա հետ մեկտեղ պետք զգան, որ այդ աշխատանքն իրենց ուժերին ու կարողություններին համապատասխանում է, և ուսուցիչը դժվար պահերին միշտ իրենց հետ է, և չկա որևէ դժվարություն, որ նրանք, աշխատելու դեպքում չկարողանան հաղթահարել: Երեխաները երկար ժամանակ չեն կարողանում կենտրոնացնել իրենց ուշադրությունը, նրանք միևնույն աշխատանքից արագ հոգնում են:Գործողությունների միապաղաղությունը ձանձրույթ է պատճառում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել յուրաքանչյուր տաս-տասնհինգ րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում: Աշխատանքը դասի ժամանակ կազմակեպում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդատվեն ակտիվ խաղերով, ֆիզիկական վարժություններով, հանելուկներիգուշակումով, նկարչությամբ, երգով, պարով և այլն: Նախաայբբենական փուլի ճիշտ կազմակերպման համար ուսուցիչը պետք է բազմակողմանի պատրաստված լինի, հաշվի առնի ուսումնական ժամանակի յուրաքանչյուր

վայրկյանը, դասը տանի մի քանի պլանով՝ նկատի ունենալով թե՛ դաստիարակչական, թե՛ կրթական աշխատանքների, թե՛ խաղի ու աշխատանքի ճիշտ զուգակցմամբ:

Ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ հիմանական հարցերը, որոնք կարևոր նշանակություն ունեն աշակերտներին ծանոթացնելու դպրոցին:

- Աշակերտների տեղաբաշխումը՝ ըստ նրանց առողջական տվյալների ու դպրոցական առողջապահության պահանջների:
- Աշակերտների փոխադարձ ծանոթացումը, որը հնարավորություն կտահամերաշխ կոլեկտիվի ստեղծման համար:
- Դպրոցական կարգուկանոնի բացատրումը, որը պետք է ուղեկցվի համապատասխան ձևերի ցուցադրումով և երեխայի մեջ վարվեցողության կանոնը դառնա կարողություն:
- Ճիշտ նստել սովորեցնելը, որը ոչ միայն առողջապահական խնդիր է, այլև երեխաների ֆիզիկական նորմալ զարգացման և դասերին ակտիվ մասնակցելու հիմնական նախապայմաններից մեկն է:

Այս ամենը անդրադառնում է երեխաների կամքի ու բնավորության ձևավորման վրա: Որպեսզի աշակերտներին ավելի լավ նախապատրաստես գրաճանաչության ուսուցմանը, ապա պիտի հաշվի առնես, թե որքան է զարգացած նրանց մոտ խոսքը: Խոսքի զարգացումը կարևոր նշանակություն ունի թե՛ ուսուցչի համար, որը երեխաներին նախապատրաստում է գրաճանաչության, թե՛ աշակերտների համար, որոնք պետք է լավ պատմելու կարողություն ունենան:

Առաջին դասարանի աշակերտի խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչներն են՝ բառապաշարի հարստացման, խոսքի արտահայտչականության և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, իրար հետ սերտորեն կապված, դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է:

Աշակերտի բառապաշարը իր հիմանական մասով համընկնում է գրական հայերենի համապատասխան բառամթերքի հետ, տարբերությունը միայն արտասանության ու շեշտադրության մեջ է: Ուսուցչի խնդիրը պետք է լինի ուղղել այդ բառերի արտասանությունն ու շեշտադրությունն և դրանք հիմք դարձնել երեխայի զարգացման համար:

Երեխայի խոսքում եղած առօրյա, բարբառային կամ օտար բառերն ու արտահայտություններն ուսուցիչն պետք է հետևողականորեն մաքրի՝ դրանց փոխարեն առաջադրելով գրական լեզվի համարժեքները: Յուրաքանչյուր երեխայի պատրաստվածության մակարդակն ամփոփելու համար ուսուցիչը պետք է պարզի՝

- խոսելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցչին լսելու, հասկանալու, հանձնարարությունները կատարելու և միմյանց հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը;
- հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը;

- հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով;
- ունի կցկտուր, ցածրաձայն խոսք;
- ունի արտահայտիչ խոսք;
- ունի բանավոր կապակցված խոսք, կարողանում է վերարարտադրել հեքիաթները, պատմվածքները;
- հարցերի օգնությամբ, նկարների շուրջ կազմում է մեկ-երկու նախադասություն;
- չունի ամբողջական նախադասություններ կազմելու կարողություն:
- նախադասությունները թողում է անավարտ:

Նախաայբբենական փուլում կարևոր է նաև տեսողության, լսողության, կինեսթետիկ զգացողության զարգացումը, որը երեխաների ճանաչողության և մտածողության զարգացման նախապայման է: Ուսուցիչը տևական վարժությունների միջոցով պետք է զարգացնի երեխաների հնչյունային լսողությունը, առանց որի հնարավոր չէ գրաճանաչության ուսուցումը:

Նախաայբբենական փուլի խնդիրներից են նաև երեխաների գրաֆիկական տեսողության զարգացումը: Նրանք կարողանան տարբերել կողմերը՝ վերև, ներքև, աջ, ձախ, առարկաների ձևերը՝ կլոր, ձվաձև, քառակուսի, եռանկյունի, գծերը՝ ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, թեք, կլոր, կետերը, տողերն ու տառամասնիկները:

Նախաայբբենական փուլում գրաֆիկական տեսողության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն հատուկ դիդակտիկ պարագաների՝ երկրաչափական ձևերի, պարզ պատկերների, գունավոր պաստառների օգտագործումը: Պարզ պատկերների գունավորման, մանրագծման ու նախագծման աշխատանքները:

Նախաայբբենական փուլի կարևոր խնդիրներից է նաև գրամոտորային կինեսթեզիաների մշակումը:

«Այբբենարանի» նախաայբբենական փուլի հիմանական նպատակը գրաճանաչության համար անհրաժեշտ հիմք ստեղծելն է: Այն նյութ է տալիս բազմապիսի լեզվական, ճանաչողական ու դաստիարակչական աշխատանքների համար:

Նախաայբբենական փուլում տարվող աշխատանքները ուղղված են մեկ հիմնական նպատակի՝ երեխաներին գրաճանաչության նախապատրաստելուն: Այս փուլում տարվող աշխատանքերի համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում ուսումնական հարցերը: Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները պետք է որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ ունենան, տեսականորեն ու գործնականորեն նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները բաժանվում են 2 խմբի՝ կազմակերպչական և ուսումնական:

Կազմակերպչական խնդիրներ.

- նոր ուսումնական գործունեության ծանոթացումը,
- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,
- ծանոթություն կրթական հաստատության կարգուկանոնին, դպրոցական շենքին
- ծանոթություն երեխաների իրավունքներին ու պարտականություններին ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքինբարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորումը
- գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքով վերաբերվելու կանոնների յուրացումը:
- Ուսումնական խնդիրներ.
- երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրում
- խոսելու, բացատրելու, հարցեր տալու, լսելու հասկանալու,
- հանձնարարությունները կատարելու, համագործակցելու և հաղորդակցվելու ունակությունների մակարդակը
- հնչյունային լսողության մակարդակը և հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունները. բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ, հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով, ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն
- բանավոր կապակցված խոսք կառուցելու կարողություն ունի իր տարիքին համապատասխան բառապաշար, անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ, կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները, կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ- երկու մտքով իրար կապակցված նախադասություններ, կարողանում է առաջադրված հարցերին պատասխանել ավարտուն նախադասություններով
- խոսքի շարահյուսական կառույցը. կարողանում է կառուցել ավարտուն, պարզ նախադասություններով խոսք, խոսքը կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով, կապակցված խոսքում օգտագործված նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական,պատճառահետևանքային կապերը, չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն, նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր մտքի,
- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին, կարողանան դրանք օգտագործել խոսքում,
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և կարողանան գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում,
- գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմության մեջ
- ունենան որոշակի բառապաշար և մտքերը կապակցված խոսքով ներկայացնելու

կարողություն

- ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ,
- կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների / խաղալիքներ, սպասք, ծաղիկներ, մրգեր, բանջարեղեն/ և ըստ նրանց հատկանիշների / փայտից է , քաղցր է, հոտավետ է/:

Նախադասության, բառի, վանկի, միավանկ ու բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր ու բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի և այլ լեզվական հասկացությունների մասին երեխաները գաղափար պետք է կազմեն նախաայբբենական շրջանում:

Նախաայբբենական շրջանում առաջացած խնդիրները լուծելու համար պետք է բոլոր դասերը կառուցել այնպես, որպեսզի հաշվի առնվեն դպրոց նոր ընդունված աշակերտի տարիքային առանձնահատկությունները. այդ 6 տարեկան երեխաները երկար նստել չեն կարողանում, արագ հոգնում են և չեն կարող զբաղվել միևնույն գործողությամբ: Դրա համար պետք է դասապրոցեսն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր փուլում աշակերտը ակտիվ լինի: Անհրաժեշտ են հետաքրքրաշարժ և խաղային պահեր. հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, ֆիզդադար, բեմադրություններ, երգ, պար, ռիթմիկ շարժումներ:

Ի՞նչ ուղիներով է իրականացվում այդ աշխատանքները: Այս շրջանում աշակերտները յուրացնում են լեզվական մի շարք կարևոր հասկացողություններ՝ նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին: Խոսք. Նախաայբբենական շրջանում յուրաքանչյուր դասի ժամին աշակերտները կառուցում են կապակցվածխոսք՝ մի քանի նախադասությամբ, պատմելով համապատասխան նկարը: Ինչպես այբուբենի նկարների, այնպես էլ հատուկ պաստառների շուրջ երեխաները ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում, ունկնդրում հեքիաթներ: Այս ընթացքում ուսուցիչը գաղափար է տալիս գծապատկերի մասին: Ուսուցիչն ասում է , որ պատմությունը կարելի գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու:Ուսուցիչը գծում է մի ուղղանկյուն և ասում , որ ինչպիսի պատմություն էլ հորինենք կարող ենք տեղավորել այսպիսի տնակում՝



Գաղափար նախադասության մասին: Երբ արդեն երեխաները գաղափար ունեն պատմության մասին, կարողանում են վերարտադրել դասագրքի նկարները ու պաստառները, կարողանում են ինքնուրույն կառուցել կապակցված խոսք, ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություններ պետք է մշակել: <> մեթոդի կիրառմամբ յուրաքանչյուր նկար ըստ իմաստի և բովանդակության հաջորդում է մյուսին, և կազմվում է մի ամբողջական պատմություն: Հետագայում առանձնացնելով նախադասությունը գաղափար ենք տալիս գծապատկերի մասին:

Գծապատկերի սկզբում դնում ենք հոծ և բարձր գիծ, իսկ վերջում երկու կետ : Նախադասությունը սկսում ենք մեծատառով, իսկ վերջում դնում ենք վերջակետ:

Գաղափար բառի մասին. Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին պետք է գաղափար տալ նաև բառի մասին, որպեսզի բառը դիտարկվի որպես նախադասության բաղադրիչ մաս, ապա որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող լեզվական միավոր: Բառի մասին գաղափարը նույնպես տրվում է գծապատկերի միջոցով:

<<Կենդանի բառեր>> խաղային մեթոդի կիրառումը օգնում է ամրապնդել բառ հասկացողությունը: Այն ամրապնդելուց հետո տրվում է բառի գծապատկերը նախադասության մեջ և նշում , որ իբրև բառ հանդես է գալիս նաև օժանդակ բայը, և որ յուրաքանչյուր բառ նախադասության մեջ ունի իր ուրույն տեղը:

Բառի կազմությունը: Վանկ.

Բառի մասին, որպես եզրույթ գաղափար ունենալուց հետո ուսուցչուհին ծանոթացնում է վանկին: Լավ կլինի ներկայացվող բառերը լինեն բազմավանկ, որ աշխատանքը ավելի հեշտ լինի: Նկար քարտերի միջոցով ուսուցչուհին արտասանում է բառի առաջին վանկը: Երբ բառերը արդեն կարողանում են բաժանել մասերի, որոշել քանի մասերից է կազմված, ներմուծվում է վանկ եզրույթը, ասելով , որ բառի այդ առանձին մասերին անվանում ենք վանկ: Եթե մասերի չի բաժանվում, ապա միավանկ բառ է, եթե բաժանվում է մի քանի մասերի, ապա բազմավանկ բառ է:

Գաղափար հնչյունի մասին.

Հնչյունի գաղափարը ներմուծելու համար նպատակահարմար է ներկայացնել նկար քարտերով մի շարք միավանկ բառեր, տալ դրանց գծային պատկերը: Այսպիսով գծային պատկերները կունենան տարբեր կառուցվածք: Ուսուցչուհին պետք է կենտրոնացնի բառի սկզբի և վերջի հնչյունների վրա,որի ամրապնդումից հետո աշխատանք է տարվում

բառամիջի հնչյունները լսելու վրա: Երբ երեխան կարողանում է բառի մեջ լսել հնչյունները պետք է ներմուծել հնչյուն եզրույթը:

Գաղափար ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին.

Բաղաձայն և ձայնավոր հնչյունները երեխաները տարբերակում են գործնական եղանակով:Նկարների ներկայացնելուց հետո սկզբում վերլուծում են կարճ բառերը,որոնք պարունակում են տարբեր ձայնավորներ: Երբ երեխան համոզվում է , որ որոշ հնչյուններ երկար են հնչում,իսկ որոշ հնչյուններ՝ կարճ, ներմուծվում է ձայնավոր և բաղաձայն հասկացողությունները, հիմնավորելով, որ բաղաձայն հնչյունները կարճ են հնչում, իսկ ձայնավորները՝ երկար: Նկար-բառի մոդելի վրա աշակերտը ցույց է տալիս հնչյունները քառակուսիների բաժանելով, իսկ ձայնավորները ներկում է կարմիր գույնով: Գրելու նախապատրաստում:

Նախաայբբենական փուլի կարևորագույն խնդիրներից է նաև գրելուն նախապատրաստել: Դրա համար անհրաժեշտ է աշակերտի մատների ֆալանգների ամրացումը, ձեռքի դաստակի մարզումը, տեսողական հիշողության զարգացումը, տետրի մեջ կողմնորոշվելու կարողությունը, հայերենիհիմնական տառամասնիկների գրելու կարողության մշակումը, ձախից աջ գրության ապահովումը:

Նախաայբբենական շրջանի վերջում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները

Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաները նախաայբբենական շրջանի վերջում պետք է՝

- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն) մասին և այդ եզրույթները գործածեն խոսքում,
- պարզագույն խորհրդանշանային զննականության միջոցով (գծապատկեր) կարողանան ներկայացնել նա- խադասությունը, բառը, վանկը, տառը,
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և գույների միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում,
- գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմավորման գործում,
- ունենան որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն կապակցված խոսքով ներկայացնելու (2–3 նախադասությամբ) կարողություն,
- ձեռքերը նախապատրաստվածլինեն գրելուն,
- ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ,
- կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները՝ ըստ նրանց չորս

տեղադրության[4]:

Ունկնդրում և խոսք. Պետք է.

- կարողանան ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները, պատմվածքները, բանաստեղծություններն ունկնդրել և ուսուցչի հարցերի օգնությամբ վերարտադրել,
- անգիր իմանան և արտահայտիչ արտասանեն սովորած բանաստեղծությունները, հանելուկները, շուտասելուկները,
- կարողանան մանկական թեմաներով նկարների շուրջ մտքով իրար հետ կապված 2–3 նախադասություն կազմել, որոշել նախադասության կազմի մեջ մտնող բառերիքանակը (ուսուցչի հարցերի օգնությամբ),
- կարողանան պատմել ըստ տեսածի, ըստ ունկնդրածի, ըստ հիշողության, ըստ նկարի,
- կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների (խաղալիքներ, սպասք, ծաղիկներ և այլն) և ըստ նրանց հատկանիշների (փայտից է, քաղցր է, հոտավետ է և այլն), ըստ պիտանիության ոլորտի (ուտելու համար է, խմելու համար է և այլն), ըստ նյութի տեսակի (փայտից է, ապակյա է) և այլ

Դասի պլան

Առարկա – Մայրենի

Դասարան- Առաջին

Դասի թեմա - Հնչյունային լսողությունը որպես գրաճանաչության գործընթացի արդյունավետության գրավական

Դասի տիպը — Հաղորդման

Դասի հիմնական նպատակները.

- Ծանոթացնել տարբեր հնչյունների արտասանությանը
- Կարողանալ որոշել հնչյունի տեղը բառի մեջ
- Ամրապնդել նախայբբենական շրջանում ձեռք բերած գիտելիքները /պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն շղթայի ամրապնդում, ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակում, միավանկ և բազմավանկ բառերի իմացություն, պարզ գծապատկերների կառուցում/

Սոցիալական նպատակները.

- Դաստիարակել սեր մայրենի լեզվի և գրի նկատմամբ Ձևավորել ընկերասիրություն և հանդուրժողականություն Խնդիրները.
- Բանավոր խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում նոր բառերով և բառակապակցություններով

[4]Գյուլամիրյան. Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2015, էջ 38-49

• Համագործակցելով աշխատելու կարողության ձևավորում

Կահավորումը - թեմատիկ նկարներ, ծրարներ, ջրաներկ, վրձին, համակարգիչ և մեծ էկրան, սպիտակ թղթեր

Օգտագործող մեթոդներ - Խաղային տեխնոլոգիաներ, զույգերով աշխատանք, խճանկար, մտագրոհ, կանխագուշակում

Ընթացքը՝ Խիկ համակարգով

Խթանման փուլ աշակերտների հետ ուսուցիչը արտասանում է որոշակի հնչյուններ և ցուցադրում է դրանց արտաբերման առանձնահատկությունները:

Իմաստի ընկալման փուլ Արտասանված հնչյուններով կազմված բառերի հարցում երեխաներից:

Այս փուլում կանցկացվի նաև դիդակտիկ խաղ՝ Բնակեցրո՛ւ կենդանիներին, Հավաքի՛ր ծաղիկը, Այն ո՞վ է կանչում, Բառաշղթա և այլն: Մինչ խաղն սկսելը վերհիշել ձայնավոր և բաղաձայն հնչյունները: Աշակերտները պետք է փորձեն ճիշտ տեղում փակցնել նկարը՝ նախօրոք որոշելով հնչյունի տեղը տվյալ բառում: Այնուհետև այդ բառերը կտեսակավորեն՝ ըստ նրանում պարունակվող վանկերի: Խաղն ամփոփելուց հետո, անցնում ենք Այբբենարան դասագրքի 31-րդ էջի նկարի ցուցադրման մեծ էկրանով: Աշակերտները, նախադասություն կազմելով, կպատմեն, թե ինչ են տեսնում նկարում: Բոլորի խոսքը լսելուց հետո,ակտիվ աշակերտներից որևէ մեկը կպատմի նկարը: Այնուհետև, վերհիշելով պատմություն-նախադասություն-բառ-հնչյուն շղթան,աշակերտները պատմությունից դուրս կբերեն նախադասություններ, նախադասությունից՝բառեր և կգծեն գծապատկերները:

Կշռադատման փուլ Մտագրոհի միջոցով աշակերտները կասեն զ–ս, լ-ր, ձ–ծ, շ-ս, հնչյուններով սկսվող անուններ՝ մարդկանց, գետերի, քաղաքների, կենդանիների և այլն:

Հետազոտական աշխատանքի ընթացքում հիմնվել եմ նաև այն փաստով, որ մայրենի առարկայից սովորողների ստացած ցածր գնահատականները կամ անբավարար առաջադիմությունը հաճախ ուսուցիչներն ու ծնողները բացատրում են կա՛մ երեխայի ցրվածությամբ, անուշադրությամբ, կա՛մ ուսման նկատմամբ անբարեխիղճ, անտարբեր վերաբերմունքով: Եվ հաճախ ,ցավով պետք է նշել, որ սխալվում են, որի արդյունքում սովորողները ժամանակին չեն ստանում անհրաժեշտ օգնություն, որն էլ հանգեցնում է կարդալու և գրելու կարողությունների անբավարար զարգացման: Վերջինս էլ իր հերթին պատճառ է դառնում ընդհանրապես ուսումնական ոչ լիարժեք գործունեության:Այսպիսով, ուսուցչի խնդիրն է՝ խորանալ աշակերտների ցածր առաջադիմության պատճառների մեջ: Սովորաբար, դպրոց ընդունվող բոլոր առողջ զարգացում ունեցող երեխաներն ունեն հնչարտաբերման կարողություններ, ակտիվ բառապաշար և քերականորեն ճիշտ կառուցված խոսք, սակայն ոչ բոլորն են կարողանում լսել և առանձնացնել իրենց արտասանած բառերի

հնչյունները: Իսկ վերջին տարիներին, վաղ ուսուցման, ինչպես նաև ներառական կրթության հանգամանքներով պայմանավորված , առաջին դասարանցիների մեջ հաճախ նկատվում է հնչյունային լսողության զարգացման անբավարար մակարդակ: Այն առավել ակնհայտ է ՄԶՀ ունեցող երեխաների մոտ, որն էլ հանգեցնում է գրելու և կարդալու գործընթացում լուրջ դժվարությունների՝ դիսգրաֆիայի և դիսլեքսիայի: Կարծում ենք, երեխաների հետ տարվող լոգոպեդական համակարգված աշխատանքը (իհարկե համապատասխան եզրահանգումից հետո և ծնողի համաձայնությամբ) արդյունք կտա՝ առանց երեխային անընդհատ գրել և կարդալ տալու նպատակ հետապնդող վարժությունների մեջ «խեղդելու»: Ընդ որում, այս կարևոր խնդրի լուծումը, հիմնականում պիտի իրականացվի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետ միջոցներն են, քանզի ՝ .խաղին անմիջական մասնակից լինելով՝ երեխաները սովորում են կարդալ, դասարանում ստեղծվում է աշխույժ, անկաշկանդ մթնոլորտ, .խաղի ժամանակ ակտիվանում են երեխաների մտածողական գործունեությունը, ուշադրությունը, խոսքը, երևակայությունը, .խաղը, բացի երեխաների հնչյունային լսողության զարգացումից, նրանց մեջ ձևավորում է սեփական գործունեությունը կազմակերպելու, ընկերների հետ համագործակցելու ունակություններ: Այսպիսով, դիդակտիկ խաղերը (օր՝ «Բառաշղթա», «Այն ո՞վ է կանչում»,«Բնակեցրո՛ւ կենդանիներին»,«Հավաքի՛ր ծաղիկը» …) նպաստում են ոչ միայն երեխաների հնչյունային լսողության զարգացմանը, այլև ուսումնական գործընթացում վերացնում են լարվածությունը, վախը, երեխաների մեջ հաղթահարվում է սեփական ոչ լիարժեքությունն կամ թերարժեքության բարդույթը, ստեղծվում է դրական զգացմունքային տրամադրվածություն, աշխատանքից հաճույք ստանալու հոգեկան վիճակ: մեր հետազոտական աշխատանքի այն փաստերն են, որոնք վկայակոչում են, որ անպայմանորեն պետք է հաշվի առնել երեխաների մոտ առկա հնչյունային լսողության անբավարար զարգացման կարողությունները՝ նախաայբբենական փուլում իրականացվող քայլերի հաջող իրականացման և հետագայում նպատակային ու արդյունավետ ուսումնական գործընթաց պլանավորելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների ու իրականացման ուղիների ուսումնասիրությունը բերում է հետևյալ եզրակացություններին.

Անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում խոսքի զարգացումը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից գրաճանաչության նախաայբբենական փուլում օգտակար են նկարների շուրջ տարվող աշխատանքները, պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Առաջին դասարանում աշակերտի խոսքի զարգացման հիմնական միջոցը նկարներն են: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցներից մեկը, որը չպետք է անտեսել: «Այբբենարանի» դասերին կիրառվող դիդակտիկ խաղերը ոչ միայն գիտելիքների ապահովման միջոց են, այլև կարևոր դեր ունեն երեխաների մտածողության զարգացման գործում: Հատկապես համագործակցային մեթոդով անցկացվող խաղերը աշակերտներին մղում են ինքնաճանաչման, համակողմանի զարգացման՝ դասընկերների հետ շփման դաշտ ստեղծելով:

Նախաայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝ հաշվիառնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների, մասնավորապես ուշադրության, մտածողության և հիշողության առանձնահատկությունները: Աշխատանքը դասի ընթացքում կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու նկարների շուրջ պատմություններն ավարտվեն աշակերտների ակտիվ գործունեությամբ, այդ թվում՝ ֆիզիկական վարժություններով:

Նախաայբբենական փուլի հիմնական նապատակը երեխանների աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ կատարելուն նախապատրաստել և, միաժամանակ, նրանց մատածողության զարգացումն է, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տեր-Գրիգորյան Ա. , Խոսքի զարգացման մեթոդիկա. Տարրական դասարաններ, Երևան, 1974:
2. Ուշինսկի Կ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:
4. Գյուլամիրյան Ջ., Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում, Երևան, 1986:
5. Սարգսյան Վ., Այբբենարան, Երևան 2010
6. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009: